ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 7-Ա

«22» հունվարի 2019 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՐԻԳՈՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՎԱՆԵՍՈՎԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Գրիգորի Ալեքսանդրի Ավանեսովի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղ Ամասիա, փողոց 24, շենք 8, բնակարան 4 հասցեում գտնվող 45.62 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրատվության կարգով, անհատույց, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով օտարել այդ բնակարանի վարձակալ Գրիգորի Ալեքսանդրի Ավանեսովին /հետագայում՝ Նվիրառու/:
2. Անշարժ գույքի նկատմամբ սեփականատեր ճանաչել՝
   Գրիգորի Ալեքսանդրի Ավանեսովի:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանին՝
   Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
4. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերի կատարումը վերապահել Նվիրառուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 8	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝			
ՍԵՐՈԲ ՂՈՒԿԱՍՅԱՆ՝			
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ			
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝			
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝			
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝			
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝			
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«22» հունվարի 2019 թվական
գյուղ Ամասիա